ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Զ. Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

XVIII դ. առաջին քառորդը կարևոր էջ է Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամության և օտարերկրյա նվաճողների դեմ նրանց մղած պայքարի պատմության մեջ։ Դարի հատկապես 20-ական թվականներին առավել շոշափելի են դարձել Անդրկովկասի ժողովուրդների համերաշխությունն ու համագործակցությունը ազատագրական պայքարում, որի հաղթանակի հնարավորությունը նրանք կապում էին Մերձկասպյան շրջաններում բանակած ռուսական զինված ուժերի աջակցության և Ռուսաստանի հովանավորության հետ[1]։

Նշանակալից է համատեղ զինակցության այն էտապը, որը կապված է սուլթանական Թուրքիայի ագրեսիայից պաշտպանվելու համար այդ ժողովուրդների մղած պայքարի հետ։

1723 թ. կեսերին սկսված թուրքական ագրեսիայի հետևանքով մինչև այդ պարսկական տիրապետության դեմ ուղղված հայ-վրացական ազատագրական պայքարն ուղղվեց թուրքական ագրեսիայի դեմ։ Հակաթուրքական պայքարի մեջ ներգրավվեցին նաև մահմեդական շիա դավանանքի ադրբեջանցիները։ Անդրկովկասի քաղաքական իրադրության նման փոփոխության գործում էական դեր կատարեցին նաև այդ ժողովուրդների՝ ռուսական կառավարության բարոյական և զինական աջակցությունը ստանալու ակնկալությունները, քանի որ Անդրկովկասում հակաթուրքական պայքարի ծավալման ու կազմակերպման հարցում շահագրգռված էր նաև ռուսական կառավարությունը։ Վերջինս ձգտում էր այդ ժողովուրդների ուժերով ստեղծել հակաթուրքական դիմադրական միասնական ճակատ, որպեսզի արգելակի թուրքերի շարժումը դեպի Ռուսաստանի նվաճած Մերձկասպյան շրջանները և կանխի Անդրկովկասի նվաճումը Թուրքիայի կողմից։ Պյոտր I-ը հատուկ հրովարտակով հայտարարեց հայերին իր հովանավորության տակ առնելու պատրաստակամության մասին և 1723 թ. Անդրկովկաս առաքեց պաշտոնական հատուկ պատվիրակ[2]։

Ռուսական կառավարության նման դիրքորոշման հետևանքով նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայ-ադրբեջանական ռազմա-քաղաքական դաշինքի համար, որի կնքմամբ էլ (1724 թ. գարնանը) փաստորեն լուծվեց Անդրկովկասի ժողովուրդների ուժերով հակաթուրքական միասնական դիմադրական ճակատի կազմակերպման ռուսական ծրագիրը։

---

[1] Центральный государственный исторический архив Арм. ССР, ф. вып. д. № 339, ч. I, л. 1, 2, 5, 6, 8, 9.

[2] Г. А. Эзов, Сношение Петра Великого с армянским народом, СПб., 1898, док. № 227—230.

Թուրքական նվաճողների դեմ հայ-վրաց-ադրբեջանական ուժերի ռազմական համատեղ առաջին խոշոր գործողությունը տեղի ունեցավ 1723 թ. հունիսին, երբ թուրքական զորքերը պաշարեցին Գյանջան։ Անդրկովկասի խորքերը շարժվող թուրքական բանակների համար Գյանջայի գրավումն ուներ կարևոր նշանակություն։ Ուստի պատահական չէ, որ Գյանջայի գրավման համար թուրքական կառավարությունը հատկացրել էր 60—70 հազարանոց բանակ[3], որը 18 օրվա պաշարման ընթացքում հանդիպեց քաղաքի հայ-ադրբեջանցի պաշտպանների համառ դիմադրությանը, որոնց օգնության հասավ նաև Կախեթի թագավոր Մահմեդ Ղուլի խանը (Կոստանդինը) իր զորքերով։ Նրանք «միանալով գյանջեցիներին թուրքերի դեմ կռվել են 7 օր, գիշեր և ցերեկ և այդ ճակատամարտում թուրքերից ջարդել են 7.000 մարդ ու հաղթանակել, որից հետո թուրքական սերասկյարը ստիպված էր փախչել»[4]։

Մահմեդ Ղուլի խանը, որը միաժամանակ Գյանջայի բեկլարբեկն էր, իր տրամադրության տակ ուներ հիմնականում վրացաղգի մշտական զորք, որը և կազմում էր վերոհիշյալ մարտերում նրա գլխավորած բանակի թերևս կորիզը։

Անդրկովկասի ժողովուրդների հակաթուրքական համատեղ պայքարի քննվող էտապի պատմության մեջ նշանակալից երևույթ էր նաև 1724 թ. առաջին կեսին Լոռի բերդաքաղաքի պաշտպանությունը։ Լոռին, որը լուրջ խոչընդոտ էր Երևան շարժվող թուրքերի ճանապարհին, կարևոր տեղ էր գրավում թուրքական հրամանատարության նվաճողական պլաններում, քանի որ առանց այն գրավելու Երևանի պաշարման դեպքում թուրքական բանակի թիկունքն անապահով կլիներ։ Բերդաքաղաքի պաշտպանները հերոսական դիմադրություն ցույց տվեցին թուրքերին։ Լոռիի հերոսամարտի մասին տեղեկություն է պարունակում Մահմեդ Ղուլի խանի սուրհանդակ Ռուզեպի՝ Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիայում 1724 թ. հունիսի 4-ին արած հայտարարությունը, ուր Լոռիի պաշտպանության մասին ասված է. «այդ քաղաքի տակ թուրքերը կանգնած են շատ օրեր, բայց չեն կարողանում գրավել»[5]։ Պաշարվածները պայքարել են պաշարողների դեմ և, պահպանված տեղեկության համաձայն՝ «երեք անգամ թուրքերը պարտություն են կրել»[6]։ Մեծ զոհողությունների գնով թուրքերին հաջողվել է ընկճել Լոռիի պաշտպանների դիմադրությունը և գրավել այն։ Այնուհետև դեպի Կասպից ծով արշավող թուրքական զորքերի համար հնարավորություններ են ստեղծվում լայն ճակատով Երևանի վրա հարձակվելու համար։ Երևանը ուներ ստրատեգիական խոշոր նշանակություն և Անդրկովկասի վարչական խոշորագույն կենտրոններից մեկը էր։ Հետևաբար նրա անկումը զգալի չափով բացասաբար կանդրադառնար մնացած դիմադրական օջախների վրա։

Աբրահամ Երևանցու վկայությամբ՝ նախքան Երևանի բերդի պաշարումը թուրքական բանակը հանդիպել է Եղվարդ և Կարբի գյուղերի հայ բնակչու-

---

3 «Армяно-русские отношения в XVIII веке (այսուհետև՝ «Армяно-русские отношения»), т. II, кн. II, Ереван, 1964, док. № 237.

4 Նույն տեղում, փաստ. № 246։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում։

թյան դիմադրությանն այն դեպքում, երբ պարսկական զորքը ջախջախվել և քաշվել էր Երևանի բերդի ներսը[7]։

Երբ թուրքական 60 հազարանոց[8] բանակը սերասկյար Արիֆ-Ահմեդ փաշայի գլխավորությամբ 1724 թ. ամռան սկզբներին պաշարում է Երևանի բերդը, շրջակա հայկական գյուղերի բնակիչները (որոնք ապաստանել էին բերդի ներսում) և պարսկական կայազորը երեք ամիս համառորեն դիմադրում են։ Երևանի բնակչությունը և 5 հազարանոց կայազորը, հաշվի առնելով ուժերի բացարձակ անհավասար վիճակը, օգնություն են խնդրում Գյանջայից, Շեմս-էլ-Դինլիից (Շամշադին) և Մահմեդ Ղուլի խանից։ Ջելեբի-զադեի հաղորդման համաձայն՝ վերջինս լեզգիներից և վրացիներից 10 հազարանոց զորք է հավաքում Երևանին օգնելու նպատակով[9]։ Վկայություն կա, որ Մահմեդ Ղուլի խանից բացի այդ օգնությանը մասնակցում էր նաև Քարթլիի թագավոր Վախթանգ VI-ը[10]։ Սակայն Մահմեդ Ղուլի խանի զորախումբը Նախիջևանի մոտ ջախջախվում է և քաղաքի պաշտպանության ծանրությունը ամբողջովին ընկնում է տեղի բնակչության և պարսկական կայազորի վրա[11]։ 1724 թ. ամռանը Օրդուբադ է ժամանում Երևանի խանի եղբայրը (անունը անհայտ), որը «բազում զօրօք կուսէր՝ առ ի գնալ յօգնութիւն եղբօրն իւրոյ, որ պաշարեցեալ էր ի յԵրևան քաղաքի ի զօրացն օսմանցւոց»[12]։ Այս խանը իր մոտ է հրավիրում Մեղրիի և Օրդուբադի ֆեոդալներին ու «խստագույն բանիւք» պարտավում հայ-ադրբեջանական ընդհարումների նախաձեռնողներ Օրդուբադի ֆեոդալներին, հատկապես Սաֆի Ղուլի խանին, իսկ «զմեղրացիսն արձակեաց խաղաղութեամբ ի տեղիս իւրեանց և ինքն չուեաց գնաց անտի»[13]։ Դրանից հետո «եղի... խաղաղութիւն ի մեջ նոցա»[14]։ Պարսկական խանի այս քայլը պայմանավորված էր միասնական հակաթուրքական ճակատ ստեղծելու անհրաժեշտությամբ։

Երևանի պաշտպանների դիմադրությունը կոտրելու համար թուրքական հրամանատարությունը դիմում է բոլոր միջոցներին, նույնիսկ խոստումների, սակայն պաշտպանները պատասխանում են, «որ գիտեն նրանց (թուրքերի— Զ. Ա.) խաբեությունը, որ թուրքերը իրենց բաց չեն թողնի, ավելի շուտ կըգերեն և բարբարոսաբար կվարվեն, դրա համար մինչև վերջին մարդը ազնիվ մարտում ընկնել են ցանկանում, քան թե գերի լինել»[15]։ Երևանը գրավվում է

---

7 Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմաց, Երևան, 1938, էջ 22։

8 Ա. Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, հ. 1, Երևան, 1961, էջ 139—140։

9 Նույն տեղում։

10 «Կոռնիկ հայոց աշխարհի», 1862, № 2, էջ 93։

11 Վ. Մարտիրոսյան, Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը աղատագրական պայքարում, Երևան, 1971, էջ 147։

12 Ա. Գ. Աբրահամյան, Դավիթ բեկի պատմության նախագաղափար բնագիրը («Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 3, էջ 100)։

13 Նույն տեղում, էջ 101։

14 Նույն տեղում։ Երևանին օգնության գնացող խանը հավանաբար Մահմեդ Ղուլի խանն է եղել, որովհետև գտնվելով Գյանջայի բեկլարբեկի պոստում, թերևս միայն նա ի պաշտոնե իրավունք ուներ վերոհիշյալ բնույթի դատ անել։ Քանի որ նրա տրամադրության տակ գտնվող զորքերի մի մասը կազմում էին վրացիները, ապա Երևանի պաշտպանությունը ևս ընթացել է հայ, ադրբեջանական, վրացական, մասամբ և պարսից զինված ուժերի համատեղ պայքարի պայմաններում։

15 «Армяно-русские отношения», док. № 303.

1724 թ. սեպտեմբերի 22-ին, թուրքական բանակի հրամանատարության և Երևանի խանի անջատ համաձայնության միջոցով։ Երևանը նվաճած թուրքական զորքերն իրենց հաջորդ հարվածն ուղղում են Գյանջայի, Ղարաբաղի ու Ղափանի զինական օջախների դեմ։

Աղվանից կաթողիկոս Եսային Վախթանգ VI-ին ուղղած հայատառ ռուսերեն նամակում այդ մասին հայտնում է, որ Երևանը և Նախիջևանը գրավելուց հետո թուրքերը «Շիրվանից իրենց 4-ից մինչև 5.000 մարդկանցով Մուստաֆա փաշայի գլխավորությամբ եկել են մեր (սղնախների —Զ. Ա.) դեմ»[16]։

1725 թ. մարտի 1-ին թուրքական զորքերը ներխուժում են Ղաբաբաղ։ Պահպանվել են Աղվանից կաթողիկոսներ Եսայու, Ներսեսի, սղնախների զորահրամանատարների ու Իվան Կարապետի կողմից Պյոտր I-ին, Վախթանգ VI-ին և Շահնավազ խանին ուղղված մի շարք նամակներ[17], որոնք մանրամասներ են պարունակում թուրքերի դեմ սղնախների պայքարի մասին։ Այդ փաստաթղթերից պարզվում է, որ 1725 թ. մարտի 1-ին թուրքական 4700 հոգիանոց հեծյալ զորաջոկատը Շահին, Սալահ և Ալի փաշաների հրամանատարությամբ, շրջանցելով Գյանջան, ներխուժել է Վարանդա։ Սղնախների ղեկավարները տեսնելով, որ թուրքական զորքերը «շատ են, կռուելով չէ լինիլ,— ասված է նամակում,— յառաջ գնացինք ղօնաղ արինք, մեր գեղարանց վերայ բաժանեցինք, Ճ (100)-ով, ԲՃ (200)-ով, Գ ԴՃ (3-400)-ով, թաման կոտորեցինք, միայն մէկ ՃԾ (150) մարդ փախան, Բ (2) փաշան ևս սպանեցինք, Սալահ փաշան ողջ պահած ունիմք»[18]։ Այս ջարդի ժամանակ, նամակագիրների հայտնելով, թուրքական գերությունից ազատվել են նաև «ԲՃ (200) աւելի քրիստոնեա եսիր», որոնք պետք է ստրկության վաճառվեին։ Մի այլ աղբյուրում ասվում է, որ Արաբ Ալի և Բեքիր փաշաների գլխավորությամբ Ղափանի վրա է հարձակվել 60 հազարանոց թուրքական բանակ[19]։ 1725 թ. մայիսի 11-ին Իվան Կարապետի ցարական արքունիք հղած զեկուցագրում հիշատակվում է, որ այդ հարձակումը տեղի է ունեցել նույն թվականի սկզբներին[20]։ Հակառակորդի մեծաթիվ ուժերը գրավելով զգալի տերիտորիաներ, Հալիձորի բերդում պաշարում են Դավիթ բեկի զորքերին։ Պաշարումը տևել է փետրվարի 20—26-ը[21] և ձախողվել պաշարվածների հաղթական հակագրոհով, որի ժամանակ նրանք «տապաստ արկին ի նոցա երեքտասան հազար սպառազէն։ Եւ առին զբանակ նոցա և հարիւր քառասուն և ութն դրօշակ»[22]։

Այս հաղթանակներից հետո ավելի է ամրապնդվում հայերի և ադրբեջանցիների բարեկամությունը ընդդեմ թուրք բռնակալների։ Դավիթ բեկը դիմում է դրկից խաներին հետևյալ առաջարկությամբ. «եկ միաբանեալ տացուք պատերազմ ընդ օսմանցոց»[23]։

1724—1725 թթ. թուրքական զավթիչների դեմ Անդրկովկասի ժողովուրդների մղած հերոսամարտերը խոչընդոտեցին Անդրկովկասի նվաճման թուր-

16 Նույն տեղում, փաստ. № 304։

17 Г. А. Эзов, նշվ. աշխ., փաստ. № 274, 275, 276, 277, 278։

18 Նույն տեղում, փաստ. № 274։

19 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, № 3, էջ 105։

20 «Армяно-русские отношения», док. № 312.

21 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, № 3, էջ 111—112, ծան. 47—48։

22 Նույն տեղում, էջ 103։

23 Նույն տեղում։

քական պլանները։ Վարանդայի և Հալիձորի հաղթանակները հետաձգեցին թուրքական բանակի հարձակումը Շամախիի և Գյանջայի վրա, որը օգնեց դրանց պաշտպանության ամրապնդմանը։ Այդ հաղթանակները միաժամանակ կասեցրին թուրքերի նախատեսած առաջխաղացումը դեպի Ռուսաստանի մերձկասպյան տիրապետությունները։ Այդ մասին է վկայում Վարանդայի ջարդի ժամանակ գերված Սալեհ փաշայի խոստովանությունը սղնախների ղեկավարներին[24]։ Նա հայտարարել էր, որ թուրքերն իրենց թիկունքն ապահովելու համար են ձեռնամուխ եղել սղնախների հայերին և ադրբեջանցիներին տնչնչացնելուն, որը, ինչպես տեսանք, անհաջողությամբ ավարտվեց. «թէ դուք չէիք այս միջումս,— հայտարարել էր նա,— մեք հիմա Դարպանտու Պաքու վերայ էինք գնացել, որ զատիմի մերն է»[25]։

1725 թ. գարնանը հայերի դեմ Թուրքիայի ձեռնարկած ռազմական գործողությունների խայտառակ ձախողումը ծայրահեղության հասցրեց Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ կիրառվող թուրքական դաժանությունները։ Այդ մասին Պյոտր I-ի պատվիրակ Իվան Կարապետը ցարական արքունիքին հղած իր զեկուցագրերից մեկում հայտնում է, որ թուրքերը տեղեկություն ստանալով իրենց բանակի ջարդի մասին «թէ Երևան, Թիֆլիզ, Ղափան, ամենայն դեղ, ինչ դեզ որ ձեր խանում այ, չափմիշ ա անում, ... կոդորում ա, փոքրն էսիր ան անում»[26]։

Թուրքերը ձգտում էին կրած պարտությունը փոխհատուցել հաղթանակով։ Պատահական չէ, որ 1725 թ. ամռանը թուրքական բանակը նոր, ավելի խոշոր ուժերով վերսկսեց հարձակումը հայերի և ադրբեջանցիների դիմադրությունը կոտրելու համար։ Այս մասին տեղեկություններ են պարունակվում քյոխվա Ջելեբիի հայտարարության մեջ, որը նա արել է 1725 թ. դեկտեմբերի 17-ին, ռուսական կառավարության արտաքին գործերի կոլեգիայում։ Քյոխվա Ջելեբին հայտնում է, որ «Շամախիում գտնվելու ժամանակ... լսել է, որ թուրքերին նորից են ջարդել Ղարաբաղի նահանգում, իսկ թե ինչքան, հայտնի չէ, բայց այդպիսի տեղեկություններով Դաուդ բեկի մոտ է եկել հատուկ մարդ»[27]։

Համաձայն նրա հաղորդման՝ «երբ որ թուրքերը սկսել են մոտենալ նրան (Գյանջային— Զ. Ա.), ապա այդ քաղաքի բոլոր բնակիչները կանանցով և երեխաներով, ունեցվածքով դուրս են եկել քաղաքից և եկել... հայկական սղնախները»[28]։

1725 թ. հոկտեմբերի 28-ով թվագրվող երկու փաստաթուղթ կա[29] Գյանջայի մասին խոսում են որպես թուրքական բանակի գրաված վայրի՝ նշելով, որ Ղարաբաղի հայերը, որոնք բռնի կրոնափոխ էին արվել, գնում են «Գանջայ օսմանցի ղոշունի մեջն, կալիս» և որովհետև իրենք թուրք են համարվում, ապա նրանցից «խոսք չէն պաղոմ»։ Ուրեմն Գյանջան թուրքերը գրավել են 1725 թ. աշնանը։

---

24 Г. А. Эзов, նշվ. աշխ., փաստ. № 276, 277։

25 Նույն տեղում, փաստ. № 276։

26 Նույն տեղում, փաստ. № 278։

27 Նույն տեղում, փաստ. № 281։ Հիշատակված Դաուդ բեկը Անդրկովկասը հաճախակի ասպատակող Կովկասի լեռնական ցեղերի առաջնորդներից էր։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում, փաստ. № 280։ «Армяно-русские отношения», док. № 323.

Գյանջայի անկման մասին Զելեբիի վերոհիշյալ հաղորդումը ցույց է տալիս, որ քաղաքի պաշտպանների դիմադրությունը չի ունեցել նախորդ պաշարման համադրակցվածությունը, մանավանդ որ Երիցմանկանց Ներսես կաթողիկոսի վկայությամբ՝ Գյանջա էր ուղարկվել հատուկ բանակ՝ համալրված ռազմատեխնիկական անհրաժեշտ միջոցներով[30]։ Զելեբիի վերոհիշյալ ցուցմունքում հատկանշականն այն է, որ քաղաքի բնակիչները թերևս չունենալով ինքնապաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ, ոչ թե հանձնվել են հաղթողի քմահաճույքին, այլ ապավինվել սղնախներում՝ թուրքական զավթիչների դեմ հայերի հետ պայքարը շարունակելու նպատակով։ Ի դեպ, 1725 թ. դեկտեմբերի 6-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային տված ցուցմունքում Վախթանգ VI-ի հավատարմատար, հայազգի Դավիթ Նազարովը հայտնել է, որ բացի գյանջեցիներից Ղարաբաղի ամրություններին են ապավինել նաև քրդական որոշ ցեղեր[31]։

Գյանջայի գրավումը 1725 թ. ամռանը թուրքերի ձեռնարկած ռազմական գործողությունների միակ հաջողությունն էր, քանի որ հիշատակություններ կան այն մասին, որ Ղափանի հայերը նրանց հասցրել են մի շարք հակահարվածներ։

Հալիձորի ճակատամարտում կրած պարտությունից հետո, մինչ Դավիթ բեկը զբաղված էր ադրբեջանական խանների հետ հակաթուրքական միասնական ճակատ ստեղծելու հարցերով, թուրքական 22 հազարանոց մի զորաբանակ մտնում է Մեղրի[32], որը, սակայն, Դավիթ բեկի համեմատաբար սակավաթիվ ուժերի կողմից ջարդվում և հետ է շպրտվում Արաքսից այն կողմ. «Ապա յետ այսօրիկ, իբրև ժամանակ ինչ էանց եկն և եհաս ասպատակիչ փաշան և բնակեցաւ ի Բեղ կեղն մի շաբաթ և զոչինչ կարաց առնել», իսկ հայերը մի գիշերվա մեջ նրանց «կոտորեցին և զփաշայն փախստական արարին»[33]։ Դավիթ բեկի զորաջոկատները թուրքական զորքերին ջարդ են տալիս նաև Բարգուշատի և Տաթևի ճանապարհին[34], Մանլև գյուղի մոտ[35]։ Անցնելով հակահարձակման, նրանք թուրքերին դուրս են քշում նաև Օրղուբադից և հայկական Ագուլիս քաղաքից, ազատագրելով նաև գերիներին ու խլելով թալանված գույքը, իսկ հետագայում՝ մի քանի ընդհարումների շնորհիվ Ղափանը մաքրում են թուրքերից ու վերադառնում Հալիձոր[36]։

Այսպիսով, 1725 թ. ընթացքում Անդրկովկասի նվաճման և Կասպից ծովի ափերը դուրս գալու նպատակով սուլթանական Թուրքիայի ձեռնարկած ռազմական միջոցառումները հիմնականում անհաջողության են մատնվում։ Չնայած Գյանջայի նվաճմանը, դեռևս պայքարում էին Ղարաբաղի և Սյունիքի զինական օջախները, որոնք Կասպից ծով տանող ճանապարհին թուրքերի գլխավոր արգելքներն էին։ Առանց այս շրջանները գրավելու և Շամախի զորք

---

30 Նույն տեղում, փաստ. № 247։

31 Վ. Ա. Ոսկանյան, Վ. Կ. Դիլոյան, Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում 18-րդ դարի 20-ական թվականներին (նոր վավերագրեր), («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, փաստ. № 17)։

32 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, № 3, էջ 104։

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում, էջ 105։

36 Նույն տեղում, էջ 105—106։

մտցնելու թուրքերի համար վտանգավոր կլիներ հարձակումը Մերձկասպյան ռուսական տիրապետությունների վրա, քանի որ կընկնեին ռուսական և հայկական ուժերի աքցանի մեջ։ Ղաբալայի և Շամախիի հայերի ու ուդիների վկայությամբ, «քանի որ սղնաղն առել չէն (թուրքերը— Զ. Ա.) վախում են Շամախի գալն, թէ մեջ կուգցէն մեր ղօշունն կուկոտորէն Բ(2) կաւուրի մեջ չի ընկնենք. ինչ վախտ, որ սղնաղն առնէն, մին օր չէն մնալ Գանջայ, կուկան Շամախի». այնուհետև, «օսմանցիքն ասում են, թէ որ Շամախին առինք, Մսկուր մեր ձերքին է, Պաքուի աղն կամ նոթն, դեղարանքն ողջ մեր ձերքին է»[37]։

Պատահական չէ, որ հայկական զինական օջախների նվաճման համար թուրքական զորահրամանատարությունը 1725 թ. հետո դիմեց բոլոր միջոցներին, որը հանգեցրեց Անդրկովկասի ժողովուրդների դիմադրության ուժեղացմանը, կազմելով նոր փուլ նրանց ազատագրական պայքարի նշված ժամանակաշրջանի պատմության մեջ։

ИЗ ИСТОРИИ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ ЗАКАВКАЗСКИХ НАРОДОВ

З. А. АРЗУМАНЯН

Резюме

Освободительное движение народов Закавказья, возникшее в первой четверти XVII в., приняло особую остроту в 1723 г. в связи с экспансией Турции вглубь Закавказья. Народы Закавказья, пользуясь моральной поддержкой России, создали единый фронт сопротивления Турции. Будучи связаны между собой военно-политическим союзом, эти народы общими усилиями сумели оказать турецким захватчикам упорное сопротивление при осаде городов Лори, Ереван, Гянджа, а в Карабахе и Капане наголову разбить крупный отряд турецких войск.

После взятия Гянджи и других крупных населенных пунктов многие жители этих мест — и христиане, и мусульмане нашли приют у армян (в Карабахе), что и свидетельствует о вековой дружбе народов Закавказья.

---

[37] Г. А. Эзов, նշվ. աշխ., փաստ. № 280, 286, 287։